ԿԱՐԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍԱՍՈՒՆԻ 1904 Թ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ԴՐՕՇԱԿ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i64.96

ԱՄՓՈՓՈՒՄ

Արևմտահայ ազգային-ազատագրական պայքարում ուրույն տեղ է զբաղեցնում Սասունի 1904թ. ինքնապաշպանությունը: Սա ազատագրական պայքարի այն եզակի դրվագներից է, երբ պայքարը միավորել էր ինչպես բոլոր կռվող հայդուկներին, այնպես էլ ազգային կուսակցություններին՝ Հնչակյան, Դաշնակցություն, չնայած իրենց ունեցած շոշափելի տարաձայնություններին: Հոդվածում պայքարը ներկայացված է ըստ «Դրօշակ» պարբերականի, որն այդ տարիների իրադարձությունները արտացոլում էր մեծագույն ճշգրտությամբ, քանզի նրա տեղեկությունները համալրվում էին այդ պայքարի անմիջական մասնակիցների և ղեկավար գործիչների նամակներով, որոնք գրվում էին իրադարձությունների թոհուբոհում՝ թարմ տպավորությունների ներքո: Այս հանգամանքը հսկայական նշանակություն ունի, քանի որ ազատագրական գործիչների հուշագրությունները գրվել են իրադարձություններից տարիներ անց և շատ մանրամասնություններ բաց են թողնվել: «Դրօշակ»-ը գալիս է լրացնելու այդ բացը:

Հոդվածում քննարկվում է թուրքական կառավարության կողմից լավ նախապատրաստված Սասունի պաշարումը, որը երկար տարիներ ներկայացվել է որպես ապստամբություն, այլ ոչ թե ինքնապաշտպանություն: Թուրքական կառավարությունից բացի՝ այդ տեսակետն են առաջ տարել նաև ցարական իշխանությունները:

Սակայն այն, որ Սասունում 1894 և 1904 թվականներին ապստամբություններ են տեղի ունեցել, պատմական իրադարձությունների կեղծիք է, և այդ կեղծիքի ծննդավայրը Ելտզն էր՝ օսմանյան արքունիքը: Կեղծիքի նպատակն էր Սասունի եղերական իրադարձությունների պատասխանատվությունը գցել հայերի վրա (Պողոսյան Ս., 1989):

Բանալի բառեր և արտահայտություններ. *Սասուն, «Դրօշակ», հայդուկներ, թուրքական զորքեր, պաշարում, կոտորած, ինքնապաշտպանություն, բարենորոգումներ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարի վերջին երեք տասնամյակները և 20-րդ դարի առաջին քառորդը Թուրքիայում հայերի զանգվածային և հետևողական ոչնչացման ժամանակաշրջանն էր: Տարբեր ժամանակաշրջաններում կիրառվել են ոչնչացման տարբեր ձևեր ու մեթոդներ, բայց եղեռնը ոչ մի ժամ կանգ չի առել:

Ցեղասպանության մեթոդների փոփոխությունը շատ հաճախ կատարվում էր համաշխարհային հասարակական կարծիքը թյուրիմացության մեջ գցելու համար և դժբախտաբար նույնիսկ հայերի մեջ գտնվեցին մարդիկ, որոնք խաբվեցին և կուլ գնացին սուլթանի խորամանկություններին: Որպես լավագույն օրինակ կարող են ծառայել Սասունի 1894 և 1904 թթ. դեպքերը, որոնք փորձ է արվել ներկայացնել որպես ապստամբություն, այլ ոչ թե պարտադրված ինքնապաշտպանություն՝ հայերի կոտորածի մեղքը հենց հայերի վրա գցելու համար: Սասունում սկսված ռազմական գործողություններին նպաստում է նաև միջազգային իրավիճակի փոփոխությունը՝ 1904-ին սկսված ռուս-ճապոնական պատերազմը, որն այդ ուղղությամբ է կենտրոնացնում եվրոպական մեծ պետությունների ուշադրությունը՝ արձակելով սուլթանի ջարդարար ձեռքերը, և բացի այդ, կար ևս մեկ զորավոր գործոն, այն է՝ ռուսական կառավարության թշնամանքը հայկական շարժման նկատմամբ, որն ավելի էր խորացել հայդուկային խմբերի կողմից սահմանանցումների ժամանակ, երբ այդ խմբերը ընդհարումներ էին ունենում նաև ռուսական սահմանապահ զորքերի հետ: Դաշնակցությունը ամիսներ շարունակ պատրաստություններ էր տեսնում այդ հարձակմանն ու պաշարմանը

դիմագրավելու համար: Սակայն թուրքական զորքերի կողմից Սասունի վրա հարձակումը լինում է շատ ավելի շուտ, քան նախատեսել էին դաշնակցական գործիչները և ուժերը լինում են խիստ անհավասար, ինչն էլ իր ճակատագրական դերն է խաղում պայքարի ու ինքնապաշտպանության կազմակերպման վերջնական արդյունքի համար:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սասունի 1904թ. ինքնապաշտպանությունը արևմտահայ ազատագրական պայքարի հիշարժան էջերց է: Սրան անդրադարձել են մի շարք հեղինակներ ու պարբերականներ, սակայն «Դրօշակ» պարբերականի արտացոլած հարուստ տեղեկությունները դեռևս ամբողջականությամբ չեն ներկայացվել: Ըստ այդմ՝ հետազոտությունը կատարվել է պատմահամեմատական, համադրական-վերլուծական, պատմաքննական և զուգադրական մեթոդներով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1904 թ. սկզբներին Սասունի գլխին կուտակված սև ամպերը գնալով ավելի ահագնանում էին՝ սպառնալով այս շրջանի հայության ֆիզիկական գոյությանն իսկ: Սասունն առանց հայերի ծրագիրն ակնհայտ է դառնում արդեն 1903թ. վերջերին, երբ թշնամին, ձգտելով մեկուսացնել և կտրել այն մյուս շրջաններից, նպատակադրվել էր մեկընդմիշտ խեղդել այս ըմբոստ լեռնավայրի ազատատենչ ճիչը:

Նախ հերթականությամբ անդրադառնաք իրադարձություններին, ապա փորձենք համակարգային վերլուծության ենթարկել իրադարձությունների պատճառահետևանքային կապերն ու հայկական կողմի բացթողումներն ու թերացումները:

«Դրօշակ»-ը գրում է. «Ստույգ աղբիւրէ կ'իմանանք, թե կառավարութիւնը դիմած է քիւրդ աշիրէթներուն և խրախուսած է, որ միանան զօրքին ու «յարձակին սասունցիներու և հոն եղող յեղափոխականներուն վրայ… (**«Դրօշակ», 1903**):

1904 թ. հունվարի 30-ին Վանից արդեն հաղորդում էին. «Սասունը պաշարման դրության մեջ է: Վանից և Էրզրումից զունդ-զունդ այստեղ են դիմում: Ընդհանուր հրամանատարը եկեր էր Մուշ. հրամայված է Երզնկայի զորաբանակին

շարժվել դեպի Սասուն: Եվ այդքանն էլ բավական չհամարելով Բաղդադի 4-րդ զորաբանակից էլ մի գունդ պիտի գար … Զորքեր են լցված Շատախում, ասում են, որ թնդանոթ է ուղարկվում. ինչ են մտածում և ինչի համար, չի հասկացվում»: Բայց մեկ շաբաթ անց, երբ ամեն ինչ պարզ է դառնում, թղթակիցը շարունակում էր. «Նորանոր կոտորածի սարսափը տարածվում է ամենուրեք: Ամեն կողմե կը շշնջան. «Գարնանը կոտորած կա»: Թե ուստի ծագած է այս շշուկը, շատ որոշ չէ» **(«Դրօշակ», 1903)**: 1904 թ. հունվարին Սալեհ փաշայի զորքերն արդեն բռնել էին Սասունի ճանապարհը, իսկ 1904 թ. փետրվարի 6-ին Սասունից գրում են մի նամակ, որը պահպանվել է Մոսկվայի արխիվներից մեկում, և իր գրքերից մեկում բերել է պրոֆ. Գալոյանը: Այնտեղ ասված է. «Ձմեռը դաժան է, սառնամանիքները ու ձյունահյուսերը անտանելի են, ժողովուրդը բոբիկ է և տկլոր, իսկ պատերազմը՝ անհավասար: Թե ինչ կլինի մեզ հետ վաղը, և ինչ կլինի մեր դրությունը, չգիտենք, մտածեք ինքներդ» **(Галоян Г., 1969)**:

Ռուսական կառավարության տրամադրությունները հասկանալու համար բերենք մի փաստաթուղթ, որը տպագրված է «Դրօշակ»-ի 1904թ. հունիսյան համարում: Այստեղ զինվորական նահանգապետի գաղտնի բաժին մակագրված փաստաթղթում որպես *<u>կատարելապես գաղտնի</u>* նամակ, որի տակ որպես հեղինակ հանդես է գալիս զինվորական նահանգապետ Սամոյլովը (1904 թ. ապրիլ 9), ասվում է. «Վստահելի աղբյուրներից մեզ հայտնի դարձավ, որ հայերը ձեռք են բերել ահագին քանակությամբ զենքեր, փամփուշտներ և պայթուցիկ ռումբեր՝ նպատակ ունենալով խառնակություններ առաջ բերել և կռվի բռնվել թուրքական կառավարության հետ, ներկա թվի գարնանից սկսած: Ամենավտանգավոր և անմատչելի կենտրոնը՝ առատ լեռներով և անտառներով, որտեղ ներկայումս հավաքված են 17 հազար զինված հայեր, համարվում է Սասունը: Թուրքաց կառավարությունը վճռել է ոչնչացնել Սասունում հավաքված հայերին, եթե միայն կուսակցությունների պարագլուխների հետ սկսված բանակցություններով վերջիններս չհամաձայնեն զենքերը հանձնեն: Այդ պատճառով թուրքական զորքերը կենտրոնանում են Սասունի շուրջ և տեղեկություններին նայելով՝

մոտավորապես այս ամսի կեսերից կամ մի քիչ ուշ կսկսվի նրանց ընդհարումները Սասունի ապստամբների հետ (**«Դրօշակ», 1904**):

Հայերը նաև մտադրություն ունեն մայիսի սկզբներին Կարս քաղաքում խառնակություններ առաջ բերել, ուստի Կարսի ոստիկանապետին հանձնարարել եմ ձեռք առնել ամենախիստ միջոցները հսկողություն ունենալ հայերի վրա» (**«Դրօշակ», 1904**):

Այս նամակներն ի ցույց են դնում ռուսական կառավարության վերաբերմունքը Սասունի դեպքերին, բացահայտում նրա նենգամիտ, երևակայական և ցնորամիտ մոտեցումները: Անգլիան և Ֆրանսիան նույնպես վտանգ չէին ներկայացնում արդեն սուլթանի համար, քանզի նրանց ուշադրությունը, ինչպես վերը նշեցինք, կենտրոնացել էր սկսված ռուս-ճապոնական պատերազմի վրա:

Դեռ 1903թ. ամռանը Սասունին սպառնացող վտանգը ստիպում է հայդուկներին ժողով հրավիրել Կելիեկուզանի բարձունքի վրա, այն ընտրում է զինվորական խորհուրդ, որի անդամներ են ընտրվում Անդրանիկը, Մուրադը, Գևորգ Չաուշը (**Երիցանց Մ., 1936**):

Հարկ է նշել, որ լարված էին հարաբերությունները Հրայրի և Անդրանիկի, Հրայրի և Չաուշի, Վաղարշակի և Հրայրի միջև և միայն Վահանի վճռական և կտրուկ հորդորն է նրանց սթափեցնում և բերում ընդհանուր հաշտության (**Վարանդեան Մ., 1992**):

Ըստ այդ ժողովի՝ Հրայրը պիտի շարունակեր աշխատանքները Մշո դաշտում, իսկ Թորգոմը Կայծակ Վաղարշակի հետ պետք է մեկներ Սոֆիա՝ մասնակցելու ՀՅԴ Երրորդ Ընդհանուր Ժողովին:

Կռիվներում գլխավոր ճակատի ղեկավար Հրայրը, դեմ լինելով հայդուկային ընդհարումներին, ամեն կերպ փորձում էր Սասունի դեմ սպասվելիք հարձակումը սահմանափակել հենց Սասունում, քանզի ճշմարտացիորեն համարում էր, որ Դուրան-Բարձրավանդակի մյուս շրջանները թե՛ ռազմամթերքով, թե՛ պատրաստվածությամբ ի վիճակի չեն դիմադրության և նրանց՝ պայքարին միանալը վտանգում էր նաև այդ շրջանների հայության կյանքը: Այս տեսակետին

հակառակվում էր Անդրանիկը, որը ձգտում էր այն բանին, որ Սասունին արձագանքի նաև Վասպուրականը, որը, սակայն, պատրաստ չէր լայն ժողովրդական արձագանքի, իսկ փոքրիկ հայդուկային խմբերով միջամտությունը առաջ էր բերելու նորանոր կոտորածներ այս շրջանի խաղաղ բնակչության հանդեպ:

Սասունի պաշտպանական ուժի հյուսիսային ճակատը գլխավորում էր Հրայրը, իսկ Անդրանիկի գլխավորած ուժերը փակել էին Շատախի արևելյան անցքը, Իշխանաձորի և Տալվորիկի ուժերին գլխավորում էր Գևորգ Չաուշը, իսկ Կոտոյի Հաճին պաշտպանում էր Չայի գլուխը: Սասունում կուտակված հայդուկների թիվը հասնում էր 200 հոգու, որոնք բոլորն էլ կոփված մարտիկներ էին, նրանցից երեսունը եկել էին դրսից, իսկ 170-ը՝ Տարոնից ու Սասունից էին: Սասունն ուներ ընդամենը 1200 կռվող, որոնցից 200-ը հայդուկներ: Սասունի լեռնականների դեմ եղած թուրքական ուժերը հաշվվում էին մոտ տասը հազար սվին, իսկ քրդականը՝ հինգ հազար մարդ **(Պողոսյան Հ., 1988)**:

Ինչպես վերը նշեցինք, 1904թ. հունվարին Սալեհ փաշայի հրամանատարությամբ թուրքական զորքերը բռնում են Սասունի ճանապարհը՝ կտրելով այն Մուշից:

Մինչև 1904թ. մարտ-ապրիլ ամիսը թշնամու հետ ընդհարումները կրում էին հատուկենտ բնույթ. մարտ-ապրիլին թշնամին հարձակվում է ամբողջ ճակատով: Մայիս–հունիսը կարելի է համարել հայդուկային ընդհարումների շրջան, որոնցից կարելի էր խուսափել, եթե հայդուկներն ավելի շուտ անցնեին Վան:

1904 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին արդեն Ախլաթով նահանջում են դեպի Վան, որին հաջորդում են դարձյալ մի քանի հայդուկային կռիվներ: Սասունի կռվողների թիվը կազմում էր մոտավորապես 1000 հոգի, որի դիմաց թշնամին հանել էր 9000-10000 զինվորներ ու ոստիկաններ և քրդեր 5000-7000:

Հրայրը հունվարին Կորյունի, Առաքելի և մի քանի հայդուկների հետ իջնում է Մշո դաշտ, ինքը մնում է Խաշխալտաղ գյուղում, իսկ մյուսներին ուղարկում է Հունան գյուղ: Փետրվարի սկզբին նրանք այստեղ մի տան մեջ պաշարվելով կռվի

են բռնվում զորքերի ու ոստիկանների հետ: Կռիվը տևում է մինչև երեկո, որի մանրամասները նկարագրված են «Դրօշակ»-ի 1904 թ. մարտ ամսվա համարում:

Այստեղից ֆիդայիները, թշնամուց բազում զոհեր խլելով, հեռանում են՝ պահանջելով, որ մյուսներն էլ հեռանան, նաև գյուղի բնակիչները, որոնցից միայն մի մասին է հաջողվում հեռանալ, մյուսները ենթարկվում են սոսկալի կոտորածի **(«Դրօշակ», 1904)**:

Այս կռվից հետո Շատախ անցած Անդրանիկը բացահայտում է տեղի քրդերի՝ իր դեմ կազմակերպած դավադրությունը: Նա, անցնելով Քոփ գյուղ, միանալով Սեպուհին, կրկին վերադառնում է Շատախ. պատժում են քրդերին, ավերակ դարձնում գյուղը: Սա լավ առիթ է ծառայում կառավարության համար հայերի դեմ քուրդ աշիրեթներին լարելու: Արդեն մարտին սկսվում են ընդհարումները: Կռվի մանրամասնություններին անդրադառնալը չենք համարում գերնպատակ, միայն հակիրճ կանդրադառնանք մի քանի դրվագների:

Ապրիլ 13-ին տեղի է ունենում Սեմալի կռիվը. թշնամին 10-12 հազար ուժերով հարձակվում է ողջ ճակատով: Սեմալ գյուղի բնակիչները ստիպված թողնում են իրենց հայրենի գյուղը և տեղափոխվում Գելիեգուզան: Թուրքական ուժերը արշավում են դեպի Գելիեգուզան և ցանկանում են գրավել այն, սակայն այստեղ գտնվող ուժերը հերոսաբար պաշտպանվում են: Թուրքական հարձակումից առաջ Անդրանիկի մոտ ուղարկվեցին եվրոպական պետությունների ներկայացուցիչներ, որոնք սկսեցին համոզել նրան՝ առանց կռվի թողնելու Սասունը: Տեղի է ունենում հայդուկների հավաք, որին մասնակցում էին Հրայրը, Ավոն, Կոտոյի Հաճին, Գևորգ Չաուշը, Սմբատը և ուրիշներ, որոշվում է. «Կռիվ տալ ճակատագրական, վերջին անհավասար մարտնչումներու ճակատամարտ և ապա հեռանալ սուրբ հայրենիքեն» **(Անդրանիկի յուշերը, 1935)**:

Այստեղ գլխին մահացու գնդակ ստանալով՝ Չայում սպանվում է դաշնակցական ամենափառավոր գործիչներից անվեհեր Հրայր «Դժոխքը» (Արմենակ Ղազարյան), գործիչ, որ աչքի էր ընկնում իրավիճակը լավագույնս ըմբռնելու, ճշմարիտ որոշումներ կայացնելու բացառիկ ունակությամբ, որը սեփական փառքը ստորադասում էր ժողովրդի ապահովությանը, չէր ձգտում

անհատական հայդուկային փոքրիկ ձեռնարկներով անմահացնել իր անունը, այլ նախընտրությունը տալիս էր համընդհանուրի բարօրությանն ու անվտանգությանը: Նրա մահը մեծ հարված է հասցնում ազգային-ազատագրական պայքարին, և նրա անհրաժեշտությունը շատ է զգացվում պայքարի հետագա տարիներին:

Հրայրի մահից հետո Չայի ուղղությամբ շարժվող զորքը հանդիպում է Մուրադի դիմադրությանը, որը Կելիեկուզանից օգնության հասած Անդրանիկի հետ կարողանում է թշնամուն հետ շպրտել մինչև Շենիկ:

Ապրիլ 20-22-ին տեղի է ունենում Գելիեգուզանի կռիվը, որը վարում է Անդրանիկը, սակայն 2 օրվա դիմադրությունից հետո ռազմամթերքի սակավության պատճառով կռվողները ստիպված թողնում են դիրքերը և նահանջում **(Ռուբէն, 1974; «Դրօշակ», 1904)**:

Այս դեպքերից հետո Անդրանիկն ու Վահանը կազմակերպում են խորհրդակցություն Ալուջակում՝ հետագա անելիքները ճշտելու նպատակով, և Վահանը կարգադրում է ժողովրդին տեղափոխել դաշտի գյուղերը: Այս նպատակով կազմվում է 115-հոգանոց մի խումբ Մուրադի հրամանատարությամբ, որը ժողովրդին տեղափոխելուց հետո պիտի անցներ Վան՝ կռիվները շարունակելու: Այս վերջին որոշումը բավականին տարօրինակ էր, քանզի անհասկանալի է, թե արդյոք հայդուկները չէին հասկանում դրա ոչ արդյունավետ և անտեղի լինելը. դա ոչինչ չէր տալու, պարտությունն ակնհայտ էր և անհրաժեշտ էր անմիջապես անցնել Վան: Հետո պարզվում է, որ նրանց բերած ռազմամթերքը չնչին էր, իսկ արկածախնդրական այս քայլը՝ լիարժեք անիմաստ: Մուրադը մայիսի կեսերին մի փոքր խմբով, որի մեջ էին Քեռին, Սեպուհը, Մոկացի Գրիգորը և մի քանի ուրիշներ, ճանապարհվում է Վան և մայիսի կեսերին Ախլաթում թողնում է վիրավոր Սեպուհին:

Սասունի կռիվները շարունակվում են մինչև մայիսի 1-ը: Ապրիլի 27-ին ընկնում է Տալվորիկը, Սասունում գրեթե միայնակ է մնում Վահանը: Նա Տիգրանակերտից Հաջիի և Լևոնի հետ նախ թաքնվում է Հարտք գյուղի այրերից մեկում, ապա տեղափոխվում է Զկնկոլ այրը, որտեղից Մուշի Կենտրոնական

Կոմիտեի պահանջով պիտի բարձրանար մոտակա լեռը, որտեղ նրան սպասում էր Չաուշը: Սակայն թշնամու կողմից նշմարվում է և ինքն ու Հաջին խփվում են գետն անցնելու փորձի ժամանակ:

Մշո Կենտ. Կոմիտեն Անդրանիկից պահանջում է ցրել իր խումբը և ապաստանել ռուսական հյուպատոսի մոտ:

Մուրադի վերադառնալուց հետո Մառնիկ սարի վրա տեղի է ունենում խորհրդակցություն, որտեղ ներկաները (մոտ 80 հոգի) բաժանվում են 2 խմբի: Առաջին խումբը համամիտ էր խումբը ցրելու և Անդրանիկի՝ ռուսական հյուպատոսի մոտ ապաստանելու տարբերակին՝ թույլ տալով կուսակցական մարմիններին կատարել անհրաժեշտ բանակցությունները, Անդրանիկն իր կողմնակիցներով դեմ էր սրան և առաջարկում էր Չաուշի հետ դաշտ իջնել և գրոհ տալ: Մեծամասնությունը դեմ է լինում այս առաջարկին, սակայն Անդրանիկը համառում է և Մակարի ու Գևորգի հետ իջնում է Սասուն, որտեղ վերադառնում է նաև Մուրադը: Բերդակում դիմավորելով Մուրադին՝ խումբն անցնում է Կուրավու և տալիս են Կուրավուի կռիվը (հուլիսի 16), որտեղ Անդրանիկը, փայլուն վարելով կռիվը, թշնամուն մեծ զոհեր է պատճառում, որը սակայն ոչնչով չէր կարող փոխել կացությունը:

Անդրանիկն այս կռիվներով փորձում է դեպքերի վրա հրավիրել Մեծ տերությունների ուշադրությունը և հասնել նրանց միջամտությանը: Այս նպատակին հասնելու համար նա Կուրավուի կռվից հետո դեպի Վասպուրական նահանջի ճանապարհը բռնելուց առաջ (հուլիս 18) Տարոնի և Սասունի Կենտրոնական Կոմիտեների անունից իր՝ Անդրանիկի, Տարոնցու (Գ. Տեր Կարապետեան) և Սարհատի (Գևորգ Չաուշ) ստորագրությամբ այդ օրերին Մուշում գտնվող Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հյուպասներին է ներկայացնում 16 կետից բաղկացած բարենորոգումների պահանջագիրը, որի իրականացումը կնշանակեր հայոց ինքնավարություն: Այստեղ կային հարկային քաղաքականության (10 տարով հայերին հարկերից ազատելու), հայկական գնդերի ստեղծման, եկեղեցական բռնագրավված գույքի վերադարձման, հայ

գաղթականներին և պանդուխտներին հետ վերադարձի թույլտվության և այլ կետեր: Այս պահանջագիրը ամբողջությամբ տպագրված է «Դրօշակ»-ում:

Այս պահանջագրին վիճակված չէր իրականություն դառնալու, քանզի պարտվող դիրքերից պահանջագիր ներկայացնելը, մեղմ ասած, լուրջ չէ, մանավանդ, որ դրա իրականացմանը դեմ էր Ռուսաստանը: Նահանջի ճանապարհին հայդուկները ևս մի քանի ընդհարումներ են ունենում թշնամու հետ, որոնց հետևանքով թշնամին հայդուկների հեռանալուց հետո այրում է Շամիրամ գյուղը՝ մահվան դատապարտելով այնտեղ մնացած անպաշտպան ծերերին: Աղթամարում հայդուկները խորհրդակցություն են ունենում, որին մասնակցում են նաև Կոմսը և Իշխանը: Ժողովը որոշում է. «Ժողովրդին սրտապնդելու համար պետք է, որ ժողովրդի սերն ու վստահությունը վայելող մեկը փոքր խմբով վերադառնա (Դուրան- Բարձրավանդակ), որին պետք է տրամադրել գումար մը և ռազմամթերք, սակայն ամեն կերպ ընդհարումներէ խուսափելու պայմանով» **(«Հայրենիք», 1936)**:

Եվ որոշվում է Չաուշին իր 17-հոգանոց խմբով ուղարկել Տարոն, որը չէր կարող խուսափել ընդհարումներից խառնվածքի բերումով: Պետք է նկատել, որ բավականին սխալ որոշում էր նրան Տարոն ուղարկելը, որը նոր էր ապրել կոտորածների սարսափները, մանավանդ որ այնտեղ մնացել էր Մակարն իր խմբով, որն ամեն կերպ խուսափում էր կռիվներից: Գևորգի հեռանալուց հետո Աղթամարում մնացածները պաշարվում են թշնամու կողմից և տալիս են Աղթամարի հայտնի կռիվը (օգոստոս 4-11), որից հետո խումբը միառժամանակ մնում է Վանում: Վանի գործիչները փորձում էին ամեն կերպ Անդրանիկի խմբին արագորեն հեռացնել այնտեղից՝ նորանոր կոտորածներից խուսափելու համար:

Այս ամենից ելնելով՝ Կոմսը միջոցներ է ձեռք առնում նրանց Կովկաս ճանապարհելու համար: Խումբը բաժանվում է 3 մասի և որոշ ընդմիջումներով Արճակ-Աբաղա-Մենավոր (Ս. Թադեոս Առաքյալի վանք) գծով ճանապարհում: Սալմաստում նրանց դիմավորում է Մալխասը (Արտաշես Հովսեփեան). այստեղից Անդրանիկը մի քանի ընկերներով անցնում է Թավրիզ, այնտեղից՝ Բաքու **(Մալխաս, 1950)**:

Եթե անդրադառնանք այն հարցին, թե ինչ ուժեր ունեին հակառակորդները, կտեսնենք, որ գրականության մեջ բավականին տարբեր են տեղեկությունները: Սմբատը նշում է, որ թուրքերն ունեին 18.000 կանոնավոր և գրեթե դրա կրկնակին քրդական անկանոն հրոսակներ, իսկ հայերը՝ 100 ֆիդայի, 1000 մարտունակ սասունցի (**Երիցանց Մ., 1936**):

Ռուբէն Տեր-Մինասյանը գրում է, որ թուրքերն ունեին 10.000 կանոնավոր զինվորներ ու 7000 քրդական խաժամուժ, մինչդեռ հայերը՝ 200 ֆիդայի (որոնցից 30-40-ը եկել էին Անդրկովկասից, իսկ 40-ը՝ Թուրքիայի հայաբնակ վայրերից) և 700-800 կռվող գյուղացիներ՝ հավաքված Սասունի տարբեր վայրերից: Ուրեմն, այս հեղինակի վկայությամբ, հակառակորդի թիվը հասնում էր շուրջ 17.000-ի, իսկ հայերինը՝ հազիվ 1000-ի (**Ռուբէն, 1974**): Կարո Սասունին նշում է, որ հայերն ունեին 200 ֆիդայի և 1000 սասունցի գյուղացի (**Սասունի Կ., 1956**):

1904 թ. փետրվարի 27-ին Ն. Սկրյաբինը իր զեկուցագրում հայտնում էր Կ. Պոլսի ռուսական դեսպանին, որ սուլթանը Սասունի դեմ մոբիլիզացրել է 15,5 հազար զինվոր և 3 հրանոթային ջոկատ, իսկ մարտի 22-ին նշում էր, որ Սասունի դեմ ուղարկված թուրքական զինվորների թիվը հասնում էր 20.000-ի, որոնք տեղաբաշխված էին Մուշում, Ախլաթում, Բուլանըխում, Բիթլիսում, Սղերդում, Վարդոյում, Էրզրումում և Երզնկայում (**Սասունի Կ., 1956**):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով նշենք, որ Սասունի 1904թ. ինքնապաշտպանությունը և Մշո դաշտի կռիվները արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի փառավոր էջերից են, որոնք սակայն դատապարտված էին պարտության նախ ուժերի անհավասարության, ապա նաև ժողովրդական ուժերը ջլատող մասնավոր ընդհարումների, ինչպես նաև ռազմամթերքի սակավության և ժողովրդի լայն զանգվածների զինման բացակայության պայմաններից ելնելով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **«Դրօշակ» (1903),** N 7, **(1904)** N 3, N 4, N 5, N 6:

2. **« Հայրենիք» (1936)**, թիւ 1, Տեր Յոհաննիսյան Դանիել (Տելեմակ), գրեց Սեպուհ:
3. **Անդրանիկի յուշերը (1935)**, Պէյրութ, «Ազդակ» հրատ.:
4. **Երիցանց Մ. (1936)**, Զօր. Սմբատի յուշեր, հ Ա, 1900-1914, Փարիզ, տպ. Յ. Թիւրապեան:
5. **Մալխաս (1956)**, Ապրումներ, հ. Ա, Պէյրութ, «Համազգայինի Վահէ Սէթեան» տպարան:
6. **Պողոսյան Ս. (1989)**, Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, «Հայաստան» հրատ.:
7. **Պողոսյան Հ. (1988)**, Սասունի պատմություն, Երևան, «Հայաստան» հրատ.:
8. **Սասունի Կ. (1956)**, Պատմութիւն Տարոնի աշխարհի, Պեյրութ, տպ. Սեւան:
9. **Վարանդեան Մ. (1992)**, Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, ԵՊՀ հրատ.:
10. **Ռուբէն (1974)**, Հայ յեղափոխականի մը յիշատակներ, հատոր 3 (Գ), Պէյրութ, «Համազգայինի Վահէ Սէթեան» տպարան:
11. **Галоян Г. (1969)**, Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900-1922/, Ереван, “Айастан”.

REFERANCES

1. **“Droshak”** (1903) , N 7, (1904) N 3, N 4, N 5, N 6.
2. **“Hayreniq”** (1936) , N 1, Ter Yohannisyan Daniel (Telemak), wrote Sepuh.
3. **Andraniki yowshery' /Andraniks memoir**/, (1935), Peyrut, “Azdak” ed.
4. **Yericyanc M.** (1936), Zo'r. Smbati yowsher /Memoirs of general Sepuh/, vol A, 1900-1914, Paris, p.h. Tirapian.
5. **Malkhas (1956)**, Aprowmner /Lives/, vol A, Beirut, “Hamazgain Vahe Setian” ed.
6. **Poghosyan S. (1989)**, Goyatevman payqari qar'owghinerowm /In the four paths of the struggle for survival/, Yerevan, «Hayastan» ed.
7. **Poghosyan H. (1988)**, Sasowni patmowt'yown /History of Sassoon/, Yerevan, «Hayastan» ed.

8. **Sassouni K. (1956)**, Patmowt'iwn Taroni ashxarhi /History of the Tarono world/, Beirut.
9. **Varandian M. (1992)**, Dashnakcowt'ean patmowt'iwn /History of the Dashnakcutyun/, Yerevan, YSU ed.
10. **Ruben (1974)**, Hay yeghap'oxakani my' yishatakner /Memoirs of an Armenian Revolutionary/, vol. 3, (C), Beirut, “Hamazgain Vahe Setian” ed.
11. **Galoyan G. (1969)**, Rabocheye dvizheniye i natsional'nyy vopros v Zakavkaz'ye 1900-1922 /The labor movement and the national question in Transcaucasia 1900-1914/, Yerevan, «Hayastan» ed.

Карине Овсепяан

Самооборона Сасуна в 1904года на страницах журнала "Дрошак" .

Заключение

Ключевые слова и выпожения: *Сасун, "Дрошак", айдуки, турецкие войска, осада, резня, самооборона, пеформа.*

В национально-освободительной борьбе Западной Армении значимое место занимает самооборона Сасуна в 1904 году. Это один из уникальных эпизодов освободительной борьбы, когда борьба объедединила всех борющихся айдуков, а так же национальные партии Гнчакян, Дашнакцутюн., несмотря на их ошутимые разногласия. В статье борьба представлена по данным журнала "Дпошак", который с наибольшей точностью отрозила события тех лет, поскольку его свединия были дополнены письмами непосредсвенных участников и корифеев той борьбы, написанными под свежими впечатлениями в сумотохе событий. Это обстоятельсво имеет большое значение, поскольку мемуары деятелей освобождения были написаны спустя годы после событий и многие подробные детали отсутсвали. "Дрошак" призван заполнить этот пробел.

В статье обсуждается хорошо подготовленная турецким провительством осада Сасуна, которая на протяжении многих лет представлялось как мятеж, а не

самооборона. Помимо турецкого правительства, эту теория выдвегали и царские власти.

Однако то, что в 1894 и в 1904 годах в Сасвне произашли восстания является фальсификацией истирических событий, и родиной этого фальша был османский двор. Целью подлога было возложить ответственность за Сасунские события на армян (Погосян С., 1989).

Karine Hovsepyan

Self-defense in 1904 on the pages of the magazine "Droshak"

Conclusion

Key words and expretions. *Sasun, "Droshak", Hayduks, turkish troops, siege, massacre, self-defense, improvements.*

The self-defense of Sassoon in 1904 occupies a unique place in the Western Armenian national-liberation struggle.

This is one of the unique episodes of the liberation struggle, when the struggle had united, both to all the Hayduks and to the national parties: Hnchakyan, Dashnaktsutyun, despite their obvious differences. The struggle is presented in the article according to "Droshak", which reflected the events of those years with the greatest accuracy, because his information was supplemented by the direct participants of that struggle and with letters from leading figures, which were written in the mess of events under new impressions. This fact has great importance, as the memoirs of the liberation figures were written years after the events and many details are left out . "Droshak"comes to fill that gap.

In article is discussed the well-prepared siege of Sassoon by the Turkish government, which presented for many years as a revolt, rather than self-defense. Besides the Turkish government, that point of view was also advanced by the tsarist authorities. However, the fact that rebellions took place in Sassoon in 1894 and 1904 is a falsification of historical events and the birthplace of that falsehood was ottoman court Yltzn. The purpose of the

forgery Sassoon's responsibility for the epic events put on the Armenians (Poghosyan S. 1989).

Կարինե Հովսեփյան- *ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ 19-րդ դարի ազատագրական պայքար, Դաշնակցության պատմություն: Հեղինակ է 5 գիտական հոդվածների: karine.hovsepyan.1985@mail.ru.*

Карине Овсепян - *соискатель кафедри истории Армении ЕГУ. Научные интересы: освободительная борьба 19 века, история партии Дашнакцутюн. Автор 5 научных статьей. karine.hovsepyan.1985@mail.ru.*

Karine Hovsepyan - *is a condidat department of history of Armenia at Yerevan State Univesity. Scientific interests: liberation struggle of the 19th century, history of the Dashnakcutyun party. Autor of 5 scientific articles. karine.hovsepyan.1985@mail.ru*

Խմբագրություն է ուղարկվել 22.02.2024թ.
Հանձնարարվել է գրախոսության 27.02.2024թ.
Հրապարակման է ներկայացվել 05.06.2024թ.